

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/9

23 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Մարգարիտա Առաքելյանի 28.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6104084 ակտի դեմ:

Ա/Ձ Մարգարիտա Առաքելյանի գանգատում բերված փաստարկները.

Կապանի ՏՀՏ պետի 17.10.2014թ. թիվ 6104084 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Մարգարիտա Առաքելյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 17.11.2014թ. կազմվել է թիվ 6104084 ակտը:

Նշված ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ:

1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով սահմանված է հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգը:

Նշված կարգի 1.2. կետի համաձայն՝ Հսկիչ գնում է համարվում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը:

2. ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված է «Հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգ»-ը (այսուհետ՝ Կարգ):

Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների ու հարկային պարտավորությունների հաշվարկմանը (գնահատմանը), ..., «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների տրամադրմանը, ինչպես նաև արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների կատարմանն ուղղված հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման գործընթացը:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ կանխիկ հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման աղբյուր են՝

ա) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցները.

բ) «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28 հոդվածով սահմանված կարգով կազմավորված ֆոնդը:

Կարգի 6.1 կետի համաձայն՝ «Հսկիչ գնման (գնումների) արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 6.2-րդ կետում նշված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները»:

Վերը նշված իրավական ակտերի վերլուծությունից հետևում է, որ տնտեսավարողի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենան ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ կիրառելու կամ շահագործելու վերաբերյալ ապացույցները պետք է արձանագրվեն բացառապես «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով նախատեսված կարգով կատարված հսկիչ գնումների ընթացքում, քանի որ նման խախտումների արձանագրման այլ ընթացակարգ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ: Հետևապես ցանկացած այլ եղանակով ձեռք բերված ապացույցները, համարվում են ձեռք բերված օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևապես չեն կարող հիմք հանդիսանալ տնտեսավարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու համար:

Այսպես, ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված են կանխիկ հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման աղբյուրները, ինչպես նաև հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապրանքների վերադարձման կարգը: Այսինքն, տվյալ դեպքում օրենսդրորեն բացառվում է հարկային տեսուչի կողմից իր միջոցների հաշվին ապրանք գնելու հնարավորությունը: Բացի այդ, սահմանված է գնված ապրանքը հետ վերադարձնելու ընթացակարգ, որը կարևոր հանգամանք է հանդիսանում տնտեսավարող սուբյեկտի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենան ՀՀ օրենսդրությամբ պահանջների խախտմամբ կիրառելու կամ շահագործելու փաստը ապացուցելու համար: Սակայն վերը նշված բոլոր ընթացակարգերը կարող են կիրառվել միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով նախատեսված կարգով հսկիչ գնում կատարելու ընթացքում, քանի որ այդ մասին ուղղակիորեն նշված է ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգում:

Տվյալ դեպքում Կապանի ՏՀՏ 17.11.2014թ. թիվ 6104084 ակտը, որով Ա/Ձ Մարգարիտա Առաքելյանի նկատմամբ առաջադրվել են պարտավորություններ, կազմվել է վերը նշված իրավանորմերի պահանջների խախտմամբ՝ առանց սահմանված կարգով հսկիչ գնում կատարելու, ինչը բավարար հանգամանք է վիճարկվող ակտը անվավեր ճանաչելու համար:

Հաշվի առնելով վերը նշվածը, Ա/Ձ Մարգարիտա Առաքելյանը խնդրում է անվավեր ճանաչել Կապանի ՏՀՏ 17.11.2014թ. թիվ 6104084 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 17.10.2014 թ-ի թիվ 6104084 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Մարզարիտա Առաքելյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 17.11.2014 թ-ին կազմվել է թիվ 6104084 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Գ.Անդրեասյանի կողմից 29.10.2014 թ-ին, ժամը 15:20-ին Ա/Ձ Մարզարիտա Առաքելյանին պատկանող խանութից կատարվել է 670 դրամի գնում, որի դիմաց կանխիկ վճարված գումարը վաճառողուհի Գայանե Գևորգյանը չի մուտքագրել ՀԴՄ և չի տրամադրել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Արդյունքում, ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտելու համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Մարզարիտա Առաքելյանի մոտ ստուգումն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես, Ակտի 2-րդ կետով արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Գ.Անդրեասյանի կողմից 29.10.2014 թ-ին, ժամը 15:20-ին Ա/Ձ Մարզարիտա Առաքելյանին պատկանող խանութից կատարվել է 670 դրամի գնում, այն դեպքում, երբ գործող ընթացակարգերի համաձայն պետք է կատարվեր հսկիչ գնում:

Այսպես, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011 թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունները, ինչպես նաև այդ գործողությունների արդյունքում ձեռք բերվող և ստուգման ակտում պարտադիր արտացոլման ենթակա տվյալները (ապացույցները), որոնք անհրաժեշտ են ակտով արձանագրված խախտումն հիմնավորված համարելու համար: Մասնավորապես, շրջաբերական նամակի «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում բերված օրինակում հստակ նշված է, որ ստուգման ակտում անհրաժեշտ է նշել ոչ թե գնում, այլ՝ հսկիչ գնում արտահայտությունը: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ, ըստ էության, հսկիչ-դրամարկղային մեքենան ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ կիրառելու կամ շահագործելու վերաբերյալ ապացույցները պետք է արձանագրվեն բացառապես հսկիչ գնում կատարելու միջոցով, ինչը քննարկվող դեպքում տեղի չի ունեցել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6104084 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

